Պարույր Սևակ

Անվերնագիր 15

Իմ արցունքները թեպետ չեն հոսում,
Բայց ինքը սիրտըս արցունքով է թաց՝
Ինչպես մանկության օրերում անցած,
Երբ լալիս էի ես անարտասուք
Եվ մորըս ասում.
-«Քաղցա՛ծ եմ, քաղցա՛ծ»...
Բռնում էր մայրս հարցերի ճամփան,
Որ սիրտս շահի իր ունեցածով.
Չի՞ր, չամի՞չ, փշա՞տ, թե՞ տանձ ու խնձոր:
Իսկ ես մտքիս մեջ ունեի մի բան
Եվ մյուսները մերժում էի չոր:
Հարցնում էր էլի իմ մայրը ջահել,
Ու թվարկելիս և ա՛յն էր հիշում,
Ինչ որ ես էի մտքումըս պահել:
Կուզեի, որ նա մեկից կռահեր,-
Եվ այդ էլ էի դառնացած մերժում:
Արցունքով է թաց իմ սիրտը կրկին...
Գիտե՛մ, թե ինչով կհանգստանա.
Աչքերդդ նրան հանել են խելքից,
Նա թունդ է առնում քո տանջող քելքից:
Բայց ինչպե՞ս քո դեմ նա իրեն բանա:

Տեսնում եմ ես քեզ, երբ ոսկեհանդերձ
Քո հագուստներով շորոր ես տալիս,
Երբ սափորն ուսիդ աղբյուր ես գալիս:
Բայց ես քեզ՝ սիրո ծարավով հանդերձ՝
Չտեսնելու եմ վերստին տալիս:
Թե խոստովանեմ՝ գուցե չմերժես,
Բայց ցավալի է, որ միանգամից
Դու չես կռահում և մի անգամ ինձ
Այնպես չե՞ս նայում, չե՞ս ժպտում այնպես,
Որ այսպես լցվա՛ծ, լքվա՞ծ չզգամ ինձ:

23.V.1946թ. 21.VII.1953թ.
Երևան Նավչալու